# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. օգոստոսին
### /վերլուծություն/

2006թ. օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10790 գործարքներ, որոնց քանակը 2005թ. օգոստոսի համեմատ նվազել է 37.3%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ աճել՝ 14.4%-ով:

2006թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2006թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2006թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4740 օտարման գործարքների 87.5% կազմել են առուվաճառքները, 11.8%՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.2%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 42.9%-ը՝ հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. օգոստոսին, 2006թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 18.6%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 35.8%-ով: 2006թ. օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.0% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. հուլիսի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 29.2%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 44.2%-ով:

2006թ. օգոստոսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

| Համայնքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. օգոստոսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | օգոստոս 2005թ. | օգոստոս 2006թ. | հուլիս 2006թ. |
| Կենտրոն | 178900-900000 | 302900 | 385000 | 371000 |
| Արաբկիր | 114300-771000 | 248000 | 305700 | 294900 |
| Քանաքեռ Զեյթուն | 111100-362900 | 151700 | 185700 | 176700 |
| Նոր-Նորք | 92300-327800 | 147700 | 174300 | 165500 |
| Ավան | 99100-226300 | 129500 | 161300 | 149700 |
| Էրեբունի | 103800-293400 | 130900 | 154400 | 145000 |
| Շենգավիթ | 105100-399400 | 154900 | 188400 | 178100 |
| Դավթաշեն | 118000-282100 | 157600 | 193300 | 182800 |
| Աջափնյակ | 103800-451100 | 149300 | 172100 | 165900 |
| Մալաթիա-Սեբաստիա | 90300-271900 | 143300 | 172700 | 162900 |
| Նուբարաշեն | 57400-137500 | 79300 | 110000 | 110000 |
| **Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/** | 57400-900000 | 163200 | 200300 | 191100 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. օգոստոսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ հուլիսի համեմատ աճել են 4.8 %:

2006թ. օգոստոսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 610 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. հուլիսի համեմատ աճել է 51.4%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 32.9%-ով:

2006թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և | Միջին գները /դրամ/ |
|---|---|---|---|

| | | առավելագույն գները 2006թ. օգոստոսին /դրամ/ | օգոստոս 2005թ. | օգոստոս 2006թ. | հուլիս 2006թ. |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | Աշտարակ | 60300 - 95000 | 49200 | 69200 | 61100 |
| | Ապարան | 18000 - 28000 | 22000 | 25900 | 25900 |
| | Թալին | 13600 - 34800 | 21500 | 26600 | 23900 |
| Արարատ | Արտաշատ | 39100 - 137780 | 37100 | 55200 | 47900 |
| | Մասիս | 36000 - 96100 | 49600 | 63600 | 54100 |
| | Վեդի | 22600 - 65300 | 32600 | 43500 | 37200 |
| | Արարատ | 19300 - 75100 | 36100 | 43000 | 39400 |
| Արմավիր | Վաղարշապատ | 71000 - 159100 | 73200 | 93900 | 79100 |
| | Արմավիր | 38700 - 125200 | 43200 | 63500 | 53700 |
| | Մեծամոր | 33000 - 67600 | 23600 | 39700 | 33900 |
| Գեղարքունիք | Սևան | 28300 - 88200 | 29400 | 39000 | 33000 |
| | Գավառ | 20400 - 30000 | 21200 | 24900 | 24900 |
| | Մարտունի | 22500 - 67500 | 35700 | 38800 | 38800 |
| | Վարդենիս | 13500 - 30000 | 18300 | 21000 | 21000 |
| | Ճամբարակ | 5900 - 31100 | 10000 | 13200 | 13200 |
| Լոռի | Վանաձոր | 27000 - 115200 | 39200 | 56100 | 48200 |
| | Ստեփանավան | 15000 - 31700 | 21800 | 24800 | 24800 |
| | Սպիտակ | 30300 - 57300 | 25500 | 39300 | 33400 |
| | Ալավերդի | 9600 - 25000 | 17700 | 21100 | 20400 |
| | Տաշիր | 11300 - 33300 | 19700 | 19800 | 19400 |
| | Թումանյան | 4100 - 11300 | 5300 | 5400 | 5100 |
| | Շամլուղ | 2300 - 8300 | 2800 | 3000 | 2700 |
| | Ախթալա | 6800 - 16000 | 10600 | 10900 | 10100 |
| Կոտայք | Աբովյան | 55000 - 184700 | 76100 | 105000 | 91500 |
| | Նոր Հաճն | 53100 - 101000 | 55600 | 70740 | 60900 |
| | Բյուրեղավան | 22700 - 79800 | 34000 | 50500 | 43000 |
| | Եղվարդ | 50200 - 88200 | 46000 | 66400 | 56100 |
| | Հրազդան | 20900 - 73400 | 28000 | 39600 | 35100 |
| | Ծաղկաձոր | 68000 - 88800 | 54800 | 73100 | 73100 |
| | Չարենցավան | 26300 - 78400 | 34500 | 46700 | 39100 |
| Շիրակ | Գյումրի | 25100 - 127100 | 41400 | 52800 | 48400 |
| | Արթիկ | 19600 - 61500 | 25000 | 31730 | 29900 |
| | Մարալիկ | 8400 - 30000 | 21100 | 21300 | 21300 |
| Սյունիք | Գորիս | 26800 - 79300 | 43300 | 52500 | 52500 |
| | Կապան | 29000 - 91400 | 31300 | 45600 | 40430 |
| | Սիսիան | 26700 - 62700 | 26500 | 38900 | 33400 |
| | Մեղրի | 20000 - 43300 | 20700 | 30900 | 27800 |
| | Ագարակ | 9000 - 31100 | 17600 | 19900 | 19900 |
| | Քաջարան | 20200 - 45600 | 16900 | 28300 | 24600 |
| | Դաստակերտ | 4500 - 11300 | 6500 | 6800 | 6200 |
| Վայոց Ձոր | Վայք | 39500 - 52200 | 28600 | 40400 | 34900 |
| | Եղեգնաձոր | 33800 - 117000 | 40800 | 63400 | 53300 |
| | Ջերմուկ | 43600 - 189200 | 44000 | 69080 | 60500 |
| Տավուշ | Դիլիջան | 28100 - 95800 | 32200 | 49800 | 42300 |
| | Իջևան | 40600 - 99900 | 36400 | 59870 | 50300 |
| | Բերդ | 22100 - 70600 | 25300 | 30470 | 29900 |
| | Նոյեմբերյան | 8500 - 25000 | 14300 | 22000 | 16600 |

2006թ. օգոստոսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ հուլիսի համեմատ աճել են 12.3 %:

2006թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 465 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 108, մյուս մարզերում միասին վերցրած՝ 357: 2006թ. հուլիսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 7.1%-ով, ընդ որում Երևանում աճել է 1.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 8.8%-ով: 2005թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 8.1%-ով, ընդ որում Երևանում նվազել է 4.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 12.6%-ով:

2006թ. օգոստոսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

| Համայնքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. օգոստոսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | օգոստոս 2005թ. | օգոստոս 2006թ. | հուլիս 2006թ. |
| Կենտրոն | 135000-900200 | 330300 | 389700 | 386300 |
| Արաբկիր | 90000-450100 | 264900 | 307800 | 299200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 67500-270100 | 159000 | 187800 | 181000 |
| Նորք-Մարաշ | 90000-450100 | 183400 | 188300 | 186600 |
| Ավան | 90000-360100 | 137300 | 162800 | 150800 |
| Էրեբունի | 67500-225100 | 135500 | 155800 | 149200 |
| Շենգավիթ | 67500-202500 | 158600 | 190000 | 179000 |
| Դավթաշեն | 90000-405100 | 162500 | 194800 | 185300 |
| Աջափնյակ | 67500-270100 | 157500 | 174200 | 169200 |
| Մալաթիա-Սեբաստիա | 67500-405100 | 147900 | 174500 | 166300 |
| Նուբարաշեն | 40500-155000 | 87600 | 113100 | 111700 |
| Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/ | ***40500-900200*** | ***175000*** | ***203500*** | ***196800*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. օգոստոսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ հուլիսի համեմատ աճել են 3.4 % :

2006թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. օգոստոսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2005թ. օգոստոս | 2006թ. օգոստոս | 2006թ. հուլիս |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | Աշտարակ | 29100 - 98000 | 50400 | 70300 | 65200 |
| | Ապարան | 13500 - 36000 | 23500 | 27800 | 27800 |
| | Թալին | 13600 - 36000 | 23300 | 27400 | 25100 |
| Արարատ | Արտաշատ | 22500 - 141000 | 38400 | 55900 | 49300 |
| | Մասիս | 25000 - 98000 | 51200 | 64900 | 55300 |
| | Վեդի | 22500 - 67500 | 33700 | 44700 | 38500 |
| | Արարատ | 22500 - 76800 | 37500 | 43600 | 40800 |
| Արմավիր | Վաղարշապատ | 54100 - 164200 | 74300 | 94700 | 80300 |
| | Արմավիր | 22500 - 126000 | 44900 | 64000 | 54900 |
| Գեղարքունիք | Սևան | 18000 - 90600 | 31500 | 39800 | 37700 |
| | Գավառ | 10000 - 37800 | 22300 | 26200 | 26100 |
| | Մարտունի | 22200 - 68000 | 37700 | 40100 | 40000 |
| | Վարդենիս | 11000 - 32500 | 21100 | 22500 | 22200 |
| | Ճամբարակ | 4500 - 32600 | 11200 | 14700 | 14700 |
| Լոռի | Վանաձոր | 23200 - 116800 | 40400 | 56600 | 49500 |
| | Ստեփանավան | 13500 - 40200 | 27300 | 27400 | 26500 |
| | Սպիտակ | 20000 - 58600 | 27100 | 39900 | 34500 |
| | Ալավերդի | 9000 - 31500 | 18700 | 22000 | 21900 |
| | Տաշիր | 9000 - 36500 | 21100 | 21200 | 21000 |
| | Թումանյան | 4500 - 18000 | 6800 | 6900 | 6900 |
| | Շամլուղ | 2300 - 13500 | 4200 | 4300 | 4200 |
| | Ախթալա | 9000 - 22500 | 12000 | 12200 | 11600 |
| Կոտայք | Աբովյան | 45500 - 191600 | 79200 | 106000 | 93800 |
| | Նոր Հաճն | 42500 - 105800 | 57500 | 71500 | 62300 |
| | Բյուրեղավան | 22200 - 81400 | 36000 | 51500 | 44100 |
| | Եղվարդ | 30200 - 90300 | 48600 | 67200 | 57300 |
| | Հրազդան | 18000 - 74000 | 30100 | 40200 | 36900 |
| | Ծաղկաձոր | 40000 - 112500 | 56900 | 75800 | 74900 |
| | Չարենցավան | 18000 - 79300 | 36800 | 47800 | 40300 |
| Շիրակ | Գյումրի | 28200 - 129000 | 44100 | 53800 | 49900 |
| | Արթիկ | 13300 - 62400 | 27200 | 32600 | 31100 |
| | Մարալիկ | 13500 - 40000 | 23900 | 24000 | 22900 |
| Սյունիք | Գորիս | 18000 - 79900 | 44800 | 54000 | 53800 |
| | Կապան | 22000 - 94000 | 32800 | 47000 | 41600 |
| | Սիսիան | 20000 - 66400 | 28300 | 39900 | 34500 |
| | Մեղրի | 13500 - 44800 | 22800 | 31600 | 28800 |
| | Ագարակ | 13300 - 36000 | 19900 | 21000 | 21000 |
| | Դաստակերտ | 4500 - 18000 | 8800 | 8800 | 8500 |
| Վայոց Ձոր | Վայք | 26000 - 55600 | 30500 | 41200 | 36000 |
| | Եղեգնաձոր | 22200 - 118400 | 42500 | 64200 | 54900 |
| | Ջերմուկ | 26500 - 191600 | 30200 | 37600 | 36700 |
| Տավուշ | Դիլիջան | 26600 - 97500 | 33700 | 50800 | 43600 |
| | Իջևան | 22200 - 101100 | 37700 | 61000 | 51400 |
| | Բերդ | 20000 - 71200 | 26300 | 31300 | 31100 |
| | Նոյեմբերյան | 9000 - 31500 | 14400 | 23000 | 17700 |

2006թ. օգոստոսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ հուլիսի համեմատ աճել են 10.5 %:

Ընդհանուր առմամբ, 2006թ. օգոստոսին հանրապետությունում օտարվել են 1614 միավոր /843.67 հա/ հողեր, որից Երևանում՝ 168 միավոր /16.44 հա/, այդ թվում ՀՀ

հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 76 միավոր /21.39 հա/ հողեր, այդ թվում Երևանում՝ 44 միավոր /13.34 հա/, որից չկառուցապատված հողեր 25 միավոր /8.9հա/ :

Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 641 միավոր /737.12 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.54 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 627 միավոր /57.39 հա/, որից Երևանում՝ 98 միավոր /6.58 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 307 միավոր /28.22 հա/, որից Երևանում՝ 56 միավոր /7.99 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 22 միավոր /5.51 հա/, որից Երևանում՝ 9 միավոր, /1.34 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր 7 միավոր /8.77 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր 10 միավոր /6.66 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել :

2006թ. օգոստոսին հանրապետությունում օտարված հողերից 1506 միավորի /810.46 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 154 միավոր /15.58 հա/, նվիրատվության գործարքներ՝ 92 միավորի /27.34 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /0.86 հա/ և փոխանակության գործարքներ՝ 16 միավորի /5.88 հա/, Երևանում փոխանակության գործարքներ չեն գրանցվել:

Հանրապետությունում 2006թ. օգոստոսին, 2005թ. օգոստոսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 58.2%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 38.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 70.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 3.1 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 2 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 10 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 219.57 հա, որից 198.18 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 41.6%-ը կամ 627 գործարքներ /520.92 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 40 գործարքներ /6.56 հա/, իսկ 58.3%-ը կամ 826 միավորը /289.40 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 114 միավոր /9.02 հա/: 2006թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք /Տավուշի մարզ՝ 0.14 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. օգոստոսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 9 | 1.34 | 5 | 0.21 | 26 | 5.02 | 5 | 0.54 | 0 | 0.00 | 85 | 5.94 | 24 | 2.54 |
| Արագածոտն | 59 | 82.74 | 1 | 0.35 | 43 | 5.18 | 22 | 1.03 | 23 | 17.87 | 1 | 0.20 | 46 | 4.94 | 4 | 0.30 |
| Արարատ | 48 | 96.97 | 2 | 0.01 | 43 | 4.52 | 12 | 0.61 | 88 | 42.87 | 0 | 0.00 | 73 | 6.84 | 2 | 0.91 |
| Արմավիր | 21 | 63.04 | 2 | 2.88 | 0 | 0.00 | 20 | 0.53 | 56 | 67.08 | 0 | 0.00 | 50 | 4.31 | 4 | 0.03 |
| Գեղարքունիք | 2 | 1.30 | 0 | 0.00 | 13 | 1.26 | 36 | 1.10 | 14 | 15.24 | 0 | 0.00 | 7 | 0.78 | 3 | 0.30 |
| Լոռի | 1 | 1.50 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 11 | 0.68 | 12 | 7.42 | 1 | 0.10 | 7 | 0.63 | 3 | 0.25 |
| Կոտայք | 55 | 160.34 | 2 | 0.40 | 9 | 0.85 | 51 | 2.79 | 111 | 37.85 | 0 | 0.00 | 152 | 14.48 | 6 | 2.23 |
| Շիրակ | 5 | 32.81 | 0 | 0.00 | 23 | 1.09 | 28 | 0.65 | 14 | 15.18 | 1 | 0.03 | 6 | 0.58 | 1 | 0.01 |
| Սյունիք | 0 | 0.00 | 1 | 0.03 | 3 | 0.34 | 17 | 0.64 | 21 | 24.68 | 0 | 0.00 | 3 | 0.27 | 1 | 0.002 |
| Վայոց Ձոր | 9 | 27.40 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 23 | 0.85 | 2 | 2.63 | 0 | 0.00 | 1 | 0.06 | 2 | 0.25 |
| Տավուշ | 6 | 0.61 | 1 | 0.06 | 3 | 0.28 | 2 | 6.82 | 37 | 10.58 | 1 | 0.12 | 8 | 0.73 | 0 | 0.00 |
| Ընդամենը | 206 | 466.71 | 19 | 5.07 | 142 | 13.73 | 248 | 20.72 | 383 | 241.94 | 4 | 0.45 | 438 | 39.56 | 50 | 6.822 |

Ստորև ներկայացվում է 2006թ. օգոստոսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և էներգետիկայի օբյեկտների հողերի.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողերի | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 37 | 6.45 | 9 | 1.34 | 2 | 0.09 | 26 | 5.02 | 3 | 0.12 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.12 | 0 | 0.00 |
| Արագածոտն | 9 | 1.16 | 1 | 0.35 | 0 | 0.00 | 8 | 0.81 | 116 | 88.13 | 59 | 82.74 | 0 | 0.00 | 43 | 5.18 | 14 | 0.21 |
| Արարատ | 8 | 0.085 | 1 | 0.005 | 0 | 0.00 | 7 | 0.08 | 97 | 102.03 | 48 | 96.97 | 1 | 0.01 | 43 | 4.52 | 5 | 0.53 |
| Արմավիր | 12 | 3.09 | 2 | 2.88 | 0 | 0.00 | 10 | 0.21 | 31 | 63.36 | 21 | 63.04 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 10 | 0.32 |
| Գեղարքունիք | 1 | 0.07 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.07 | 50 | 3.59 | 2 | 1.30 | 0 | 0.00 | 13 | 1.26 | 35 | 1.03 |
| Լոռի | 4 | 0.32 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.32 | 8 | 1.86 | 1 | 1.50 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 7 | 0.36 |
| Կոտայք | 14 | 0.65 | 1 | 0.35 | 0 | 0.00 | 13 | 0.30 | 103 | 163.72 | 55 | 160.34 | 1 | 0.05 | 9 | 0.85 | 38 | 2.48 |
| Շիրակ | 6 | 0.20 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 5 | 0.16 | 50 | 34.34 | 5 | 32.81 | 0 | 0.00 | 22 | 1.04 | 23 | 0.49 |
| Սյունիք | 15 | 0.91 | 1 | 0.03 | 3 | 0.34 | 11 | 0.54 | 6 | 0.10 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 6 | 0.10 |
| Վայոց Ձոր | 4 | 0.02 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.02 | 28 | 28.23 | 9 | 27.40 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 19 | 0.83 |
| Տավուշ | 3 | 0.26 | 1 | 0.06 | 2 | 0.20 | 0 | 0.00 | 9 | 7.52 | 6 | 0.61 | 0 | 0.00 | 1 | 0.09 | 2 | 6.82 |
| Ընդամենը | 113 | 13.22 | 16 | 5.02 | 8 | 0.67 | 89 | 7.53 | 501 | 493.00 | 206 | 466.71 | 2 | 0.06 | 134 | 13.06 | 159 | 13.17 |

Հանրապետությունում 2006թ. օգոստոսին, 2005թ. օգոստոսի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.3 անգամ: Ընդ որում

Երևանում նվազել է 84.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 2.5 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 83.9%-ով, բնակելի կառուցապաման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 59.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 8.4 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ նվազել է 50.0%, հատուկ պահպանվող հողերի նկատմամբ 3 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. օգոստոսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 59 | 82.74 | 36.8 | 775.8 | 209.4 | 12 | 3.59 | 362.2 | 6772.5 | 2245.9 |
| Ապարան | | | | | | 7 | 7.18 | 90.6 | 767.6 | 325.7 |
| Թալին | | | | | | 3 | 4.00 | 90.6 | 758.5 | 314.2 |
| Ծաղկահովիտ | | | | | | 1 | 3.10 | 77.0 | 948.2 | 153.6 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 17 | 23.24 | 34.8 | 2000.0 | 350.2 | 37 | 10.10 | 335.1 | 5418.0 | 1180.5 |
| Մասիս | 13 | 39.90 | 60.6 | 680.7 | 354.4 | 22 | 6.55 | 181.1 | 6772.5 | 1560.7 |
| Վեդի | 18 | 33.83 | 20.3 | 2500.0 | 332.9 | 25 | 24.98 | 203.8 | 4515.0 | 980.1 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 3 | 1.39 | 31.0 | 441.0 | 167.7 | 26 | 17.27 | 294.3 | 4063.5 | 783.3 |
| Բաղրամյան | 11 | 51.74 | 33.8 | 837.4 | 368.9 | 6 | 35.37 | 90.6 | 677.3 | 479.7 |
| Վաղարշապատ | 7 | 9.91 | 32.8 | 1411.2 | 747.7 | 24 | 14.44 | 443.7 | 9030.0 | 1306.7 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 4 | 0.99 | 190.2 | 496.7 | 325.3 |
| Ճամբարակ | 1 | 0.10 | 1120.0 | 1120.0 | 1120.0 | 4 | 0.93 | 45.3 | 541.8 | 136.7 |
| Մարտունի | | | | | | | | 45.3 | 1806.0 | 443.9 |
| Սևան | 1 | 1.20 | 219.3 | 219.3 | 219.3 | | | 45.3 | 451.5 | 180.9 |
| Վարդենիս | | | | | | 6 | 13.33 | 27.2 | 532.8 | 200.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 0.53 | 163.0 | 2483.3 | 345.2 |
| Գուգարք | | | | | | 3 | 0.70 | 226.4 | 2709.0 | 885.2 |
| Սպիտակ | | | | | | 2 | 1.22 | 226.4 | 1490.0 | 483.9 |
| Ստեփանավան | 1 | 1.50 | 540.0 | 540.0 | 540.0 | 6 | 4.97 | 90.6 | 2257.5 | 328.6 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 451.5 | 195.5 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | | | | | | 58 | 17.31 | 271.7 | 11287.5 | 2902.6 |
| Եղվարդ | 41 | 143.30 | 13.3 | 884.4 | 297.7 | 45 | 16.48 | 172.1 | 11287.5 | 2031.0 |
| Հրազդան | 14 | 17.04 | 90.8 | 982.2 | 361.1 | 7 | 3.90 | 113.2 | 2709.0 | 722.2 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 2 | 32.25 | 498.8 | 498.8 | 498.8 | 1 | 0.96 | 249.0 | 1693.1 | 391.2 |
| Ամասիա | | | | | | | | 36.2 | 237.0 | 96.9 |
| Անի | | | | | | 4 | 6.05 | 108.7 | 361.2 | 199.8 |
| Աշոցք | | | | | | 9 | 8.17 | 45.3 | 112.9 | 109.2 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արթիկ | 3 | 0.56 | 420.0 | 888.9 | 576.3 | | | 63.4 | 1083.6 | 154.1 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 9 | 21.61 | 90.6 | 673.3 | 304.8 |
| Կապան | | | | | | | | 54.3 | 841.6 | 214.6 |
| Մեղրի | | | | | | 9 | 1.18 | 181.1 | 1784.2 | 421.3 |
| Սիսիան | | | | | | 3 | 1.89 | 45.3 | 631.2 | 184.5 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 3 | 23.94 | 42.0 | 113.0 | 89.0 | 1 | 0.89 | 117.7 | 2524.8 | 1214.0 |
| Վայք | 6 | 3.46 | 102.9 | 150.0 | 138.9 | 1 | 1.74 | 54.3 | 1430.7 | 473.3 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 7 | 1.56 | 45.3 | 841.6 | 320.3 |
| Իջևան | 6 | 0.61 | 385.0 | 385.4 | 385.2 | 11 | 1.49 | 240.0 | 1683.2 | 775.6 |
| Նոյեմբերյան | | | | | | 19 | 7.53 | 45.3 | 3509.5 | 446.5 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. օգոստոսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 43 | 51800.0 | 112.4 | 112.7 | 112.6 | 42 | 42497.0 | 113.2 | 3612.0 | 2058.4 |
| Ապարան | | | | | | 1 | 4000.0 | 113.2 | 632.1 | 166.2 |
| Թալին | | | | | | 3 | 2907.0 | 45.3 | 361.2 | 75.1 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 45.3 | 361.2 | 67.3 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 41 | 43200.0 | 179.3 | 391.8 | 307.5 | 25 | 26710.0 | 135.8 | 2709.0 | 760.9 |
| Մասիս | | | | | | 39 | 32700.0 | 135.8 | 9030.0 | 973.4 |
| Վեդի | 2 | 2000.0 | 120.0 | 130.0 | 125.0 | 8 | 7949.0 | 113.2 | 993.3 | 554.8 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 8 | 4681.0 | 135.8 | 2257.5 | 914.5 |
| Բաղրամյան | | | | | | | | 81.5 | 270.9 | 110.1 |
| Վաղարշապատ | | | | | | 42 | 38427.0 | 135.8 | 4515.0 | 1255.4 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 1 | 1170.0 | 135.8 | 903.0 | 315.8 |
| Ճամբարակ | 11 | 11000.0 | 115.2 | 145.0 | 142.3 | 2 | 2252.0 | 45.3 | 135.5 | 79.6 |
| Մարտունի | | | | | | 2 | 3120.0 | 90.6 | 451.5 | 182.4 |
| Սևան | 2 | 1600.0 | 621.0 | 621.0 | 621.0 | | | 90.6 | 903.0 | 122.0 |
| Վարդենիս | | | | | | 2 | 1300.0 | 45.3 | 225.8 | 85.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 600.0 | 67.9 | 270.9 | 96.9 |
| Գուգարք | | | | | | 5 | 4793.0 | 67.9 | 2347.8 | 504.3 |
| Սպիտակ | | | | | | | | 63.4 | 451.5 | 103.1 |
| Ստեփանավան | | | | | | 1 | 900.0 | 45.3 | 270.9 | 86.2 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 135.5 | 63.1 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աբովյան | | | | | | 72 | 60118.0 | 135.8 | 6772.5 | 1504.8 |
| Եղվարդ | | | | | | 71 | 76853.2 | 135.8 | 6772.5 | 1630.4 |
| Հրազդան | 9 | 8540.0 | 149.0 | 1490.0 | 386.3 | 9 | 7870.0 | 135.8 | 9030.0 | 1059.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 14 | 4642.4 | 290.4 | 26677.4 | 3153.5 | 1 | 374.9 | 113.2 | 1535.1 | 286.2 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 135.5 | 63.1 |
| Անի | | | | | | | | 67.9 | 180.6 | 88.6 |
| Աշոցք | | | | | | 1 | 800.0 | 40.8 | 135.5 | 56.8 |
| Արթիկ | 8 | 5770.0 | 42.0 | 1900.0 | 554.6 | 4 | 4650.0 | 67.9 | 925.6 | 130.3 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 2 | 2440.0 | 67.9 | 541.8 | 211.2 |
| Կապան | | | | | | 1 | 300.0 | 67.9 | 632.1 | 193.6 |
| Մեղրի | | | | | | | | 67.9 | 406.4 | 105.7 |
| Սիսիան | | | | | | | | 67.9 | 406.4 | 122.0 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | | | 67.9 | 1128.8 | 228.4 |
| Վայք | | | | | | 1 | 550.0 | 77.0 | 632.1 | 105.2 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 45.3 | 632.1 | 80.0 |
| Իջևան | 1 | 876.0 | 94.7 | 94.7 | 94.7 | 8 | 7285.0 | 67.9 | 1354.5 | 336.4 |
| Նոյեմբերյան | | | | | | | | 45.3 | 632.1 | 105.2 |

2006թ. օգոստոսին հանրապետությունում հողերի նկատմամբ անհատույց սեփականաշնորհման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 712 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 28.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. օգոստոսին, 2006թ. հուլիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 12.3%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 12.6%-ով:

2006թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 53 բնակարանների, 20 անհատական բնակելի տների, 248 հասարակական, 24 արտադրական նշանակության օբյեկտների, 362 միավոր /3570.76 հա/ հողերի, 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. օգոստոսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 14 վարձակալության գործարքների քանակը 2006թ. հուլիսի համեմատ աճել է 2.0 անգամ, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 60.0%-ով:

2006թ. օգոստոսին հանրապետությունում վարձակալված 3570.76 հա հողերից 2.95 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3567.81հա հողերի 98.9%-ը կամ 3527.06 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 6.85 հա՝ բնակավայրերի, 6.00 հա՝ հատուկ նշանակության, 5.00 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 15.00 հա՝ ընդերքի օգտագործման համար նախատեսված, 6.55 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 1.35 հա՝ ջրային հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2855.80 հա, որից 2854.05 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2268.26 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. օգոստոսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

| *Մարզի անվանումը* | *Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի* | | *Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի* | |
|---|---|---|---|---|
| | Վարձակալության գործարքների քանակները /միավոր/ | Վարձակալված հողերի մակերեսները /հա/ | Վարձակալության գործարքների քանակները /միավոր/ | Վարձակալված հողերի մակերեսները /հա/ |
| Արագածոտն | 0 | 0.00 | 81 | 288.59 |
| Արարատ | 0 | 0.00 | 3 | 33.02 |
| Արմավիր | 0 | 0.00 | 12 | 62.22 |
| Գեղարքունիք | 0 | 0.00 | 26 | 85.07 |
| Լոռի | 1 | 8.00 | 44 | 38.70 |
| Կոտայք | 0 | 0.00 | 9 | 4.46 |
| Շիրակ | 1 | 10.00 | 67 | 93.52 |
| Սյունիք | 15 | 2205.00 | 23 | 649.05 |
| Վայոց Ձոր | 6 | 45.26 | 3 | 0.20 |
| Տավուշ | 0 | 0.00 | 5 | 3.97 |
| ***Ընդամենը*** | ***23*** | ***2268.26*** | ***273*** | ***1258.80*** |

2006թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1148 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հուլիսի համեմատ աճել է 9.8%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 47.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.0%/, առանձնատների /23.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.1%/ և հողերի /6.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 614 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հուլիսի համեմատ աճել է 19.7%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 29.5%-ով:

2006թ. օգոստոսին հանրապետությունում գրավադրվել են 58.20 հա, որից 2.08 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 93.8% կամ 54.59 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 31.61 հա, գյուղատնտեսական նշանակության:

2006թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 9 և 1 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2006թ. հուլիսի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 42.9%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 61.5%-ով: 2006թ. օգոստոսին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են Արարատի՝ 80.0% և 10.0-ական%՝ Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:

2006թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1607 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. հուլիսի համեմատ աճել է 3.7%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 19.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.6%/:

**ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**